

174. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԴԵՎՐԻՇԸ[1]

Էլել ա չի էլել սի թագավոր։ Սորան աղա չի էլել։ Մեկ դևրիշ եկել ա երեկոյան սորա տունը ղոնաղ։ Այս դևրիշը այնքան պար ա էկել, սաղ ա ածել, բայց այս թագավորը չի ուրախացել։ Նա ասել ա թագավորին. «Ինչի չես ուրախություններ անում։ Բայց թագավորն ասել ա. «Ես, իմ կինս ծնրացել ենք և մեզ որդի չի ծընվում»։ Դևրիշը ասել ա. «Ինչո՞ւ չես ինձ ասում։». Նա գնացել ա մեկ իսան կորեկ բերել այս կնկա տակն ա ածել։ և մյուս օրը դուրս են եկել մինչև քառասուն երեխա։ Դևրիշը ասել ա թագավորին. «Բոլորին դու անուն կդնես, բայց փոքրը թողեր, ես կդնեմ նորան անունը։

Նա մի քանի օրից հետո եկել ա թագավորի մոտ և ասել ա. «Ո՞ւր է քո փոքր որդիդ, բեր նորան այստեղը։ Նա նորա անունը դրել ա Փիրայմադ։ Ով տարումը կմեծանա սորա օրում են մեծացել և դառել են մեծ-մեծ մարդիկ։

Մեկ անգամ թագավորի փոքր որդին բերեց մեկ խնձոր, ասեց. «Հայր իմ, այս խնձորը, որ կենա, կենա՝ ի՞նչ կդառնա»։ Հայրը ասեց. «Կհոտիր։ Հետո որդին ասեց. «Բա մենք չենք հոտո՞ւմ, ինչի՞ մեզ չես աղջիկ ուզումա։ Հայրը պատասխանեց. «Այս քաղաքում այնքան աղջիկ չկա, որ դուք առնեք, գնացեք ուրիշ երկիր, և այնտեղից առեք։ Նորա պատրաստվեցան, որ գնան։ Հայ-

---

[1] Դրաման ձեռագրում հնքիարն անվերնագիր է, վերնագրված է մեր կողմից (Ծ. Կ.)։

ը կանչեց յուր փոքր որդուն և ասեց նորան. «Որգիք գնացեք. բայց այն սարումը գիշերը վեր չգաք, այն սարում էլ վեր չգաք. գնացեք մյուս սարը»։

Նոքա գնացին և գիշերը վրա հասավ նոցա։ Նոքա վեր եկան այն սարումը, որ իրանց հայրը ասել էր՝ չվերգաք։ Նորանց փոքր եղբայրը ասեց. «Եղբայրնե՛ր, մեր հայրը ասել ա մեզ. որ՝ էստեղ վեր չգանք»։ Նոքա պատասխանեցին. «Մենք քառասուն հոգի ենք, ո՞վ պետք է մեզ մի բան անի»։

Նոքա մնացին գիշերը այդ սարումը և նոցա փոքր եղբայրը ղարավուլ էր քաշում։ Գիշերը նա տեսավ մեկ վիշաբ, որ ուներ յոթ գլուխ։ Նա հրացանը գցեց և մեկ գլուխը վեր ընկավ և այս վիշաբը ետ դարձավ և փախավ. նա էլ սորա ետնից։ Այս վիշաբը գնաց, մեկ տուն մտավ, այս տղեն էլ գնաց այդ տան մոտ իրա թուրը հանեց և այնպես կանգնեց։ Մտիկ էր տալիս տան մեջն տեսավ, որ այս տանը կա մինչև քառասուն վիշաբ։ Նոքա վեր կացան և գալիս էին, որ ուտեն այդ մարգկերանցը։ Բայց այդ տղեն դռան մոտ կանգնեց, որը որ դուրս էր գալիս՝ թրովը տալիս էր, սպանում։ Նա բոլորին էլ սպանեց և ներս մտավ տուն, տեսավ քառասուն էլ աղջիկ։ Այստեղ դոցա թողեց, գնաց յուր եղբայրների մոտ և քնեց։

Առավոտը վեր կացան և նա յուր եղբայրներին ոչինչ չի հայտնեց։ Նոքա գնացին այն մյուս սարը և գիշերը մնացին այնտեղ, երբ սորանց փոքր եղբայրը վեր կացավ և ղարավուլ էր քաշում յուր եղբայրների վերա, հանկարծ տեսավ երկնքից մեկ վիշաբ գալիս։ Նա հրացանը զցեց, և նորա գլխի մեկը վայր ընկավ։ Գլուխը էլի վեր կացավ և նստեց նորա այն պոկ եկած տեղը և սաղացավ։ Այս վիշաբը վեր առավ այս տղին և տանում էր։ Նա ասեց. «Եթե որ ինձ տանում ես, թող ես գնամ իմ եղբայրների մոտ, ես պետք է նորանց բան ասեմ»։ Նա ասեց. «Գնա՛»։

Նա գնաց եղբայրներին ասեց. «Այն մյուս սարումը, որ գիշերը քնեցինք, նորա ձախ կողմը ես շատ վիշաբներ սպանեցի. գնացեք նոցա կանայքը ձեզ կին առեք, իմ կինն էլ հետներդ տարեք»։ Նոքա գնացին և տեսան, որ ահագին գոմեշներ ընկած են։ Նոքա վախեցան, թե գնան, այնպես իմացան, թե նոքա կենդանի են։ Դորանց փոքր եղբայրիցը մեծը ասեց. «Պետք է գնամ, ինչ որ ա՝ տեսնեմ»։ Նա գնաց և տեսավ, որ կոտորած են. կանչեց նոցա. նորանք գնացին և ամեն մեկը իրանը վեր առան և իրանց փոքր եղբորինը թողեցին։

Նրանք գնացին իրենց հոր մոտ։ Հայրը, երբ որ տեսավ իրա փոքր որդին չկա, նա թակեց մյուս եղբայրներին էլ և դուրս արավ նրանց տանիցը։

Էս տղին վիշապը տարավ օդի մեջ, իր մեկ տունը։ Նա պահում էր էս տղին. այնքան չաղացրեց, որ նորա պարանոցը ոտների տակն էր ընկնում։ Էս տղեն ասեց. «Ես գիտեմ, որ դու ինձ ինչի համար ես չաղացնում. ինձ պետք է ուտես»։ Վիշապը ասեց. «Չէ՛, ես քեզ չեմ ուտիլ, միայն թե պետք է մեկ տեղ ղրկեմ»։ Նա ասեց. «Որտեղ որ ղրկես՝ ես գնամ»։ Վիշապը վեր առավ տվեց էս տղին մեկ լավ ձի և շատ ոսկի և ասեց. «Դու պետք է գնաս բերես փլան թագավորի աղջիկը»։

Նա նստեց ձիու վերա և գնաց։ Գնաց մեկ ծով անցկացավ և այն ծովի ղաթումը վեր եկավ և քնեց։ Ձին ջրի ձի էր՝ մտավ ջրի մեջ, նա այնտեղ վեր կացավ և տեսավ, որ ձին չկա։ Նա այնքան լաց եղավ, որ աչքերը քոռացան։ Երեք աղունակներ եկան մեկը ասեց. «Ո՞վ ես, ա՛յ տղա»։ Մեկն էլ ասեց. «Ինչի՞ նորան որ վիշապը ասեց՝ վեր չգաս, ինչո՞ւ է վեր եկել. հենց տեղն է»։ Մեկն էլ ասեց. «Ինչի եթե մենք թև-թևի տանք՝ մեր թևը վեր կընկնի, նա վեր կառնի ջրում կանի և կքսի աչքերը և կաղանա, և այնտեղ որ ինքը ընկել էր՝ այն քարի տակին կա մե սանձ, նա վեր կառնի այն սանձը, կկոխի ջրի մեջ և ձին իսկույն դուրս կգա»։

Էս տղեն էնպես էլ արեց, ձին իսկույն դուրս եկավ և տղեն հեծավ գնաց։ Նա մեկ ծով էլ անցկացավ ու տեսավ այն ծովի ղաթումը կա մի պառավ մարդ, էս մարդը ասեց. «Էս ով է, ա՛յ տղա, դու էլ ընկար այն վիշապի մոտ»։ Էս պառավ մարդը ասեց. «Երբ որ դու թագավորի թելի խանումը կբերես, ես իսկույն կմեռնեմ»։

Էս տղեն երեկոյան հասավ մեկ քաղաք, գիշերը մեկ պառավի մոտ մնաց. էս պառավին էս տղեն շատ ոսկի տվեց. դորա համար։ Էս պառավը ունեւր մեկ հավ՝ մորթեց։ Էս տղին պառավը ասեց. «Թագավորի աղջիկը ամեն կիրակի դուրս է, մեր հարևանի բաղի մեջ կա մեկ հավուզ, նորա մեջ լողանում է։ Դու գնա մեր հարևանի մոտ նրանք տեղը լավ կասենն»։

Էս տղեն առավոտը վեր կացավ և գնաց նորանց տուն, ասեց. «Ո՞ւր է թագավորի աղջիկը, ես պետք է նորան տանեմ»։

Մեկ կնիկ վեր կացավ ասեց. «Ես գնամ թագավորին ասեմ»։ Այն ժամանակ էս տղեն հանեց թուրը և ասեց. «Ո՞ւր ես գնում, էս հավլիս թիրա-թիրա կկտորեմ քեզ»։ Նա այն ժամանակ հետ դառավ։

Էս տղեն սորանց շատ ոսկի տվեց, որ նոքա թագավորի աղջըկա տեղն ասեն։ Նոքա ասեցին. «Հողեմ թագավորի գլուխը, նա տարենը մեզ մի կոպեկ չի տալի, մենք տեղը կասենք»։ Նորանք էս տղին իրանց բաղը տարան և այնտեղի հավուզը ցույց տվին։

Էս տղեն կիրակի օրը գնաց բաղը՝ հավուզի մոտ և աղջկան էր սպասում, տեսավ աղջիկը գալիս է շատ ղարավաշներով։

Նա ղարավաշներին կանգնացրեց և ինքը եկավ, որ լողանա։ Էս տղեն իրան համար շինել էր մեկ կոըշան, քանի որ աղջիկը հանում է շորերը, էս տղեն թփի տակ նստած բոլորը քաշում էր։

Երբ որ աղջիկը լողացավ պրծավ, դուրս եկավ, տեսավ շորերը չկա։ Սա գնաց ղարավաշների մոտ, ասեց. «Ո՞ւր են շորերս»։ Ղարավաշները ասեցին. «Մենք չենք տեսել»։

Նա էլի ետ դառավ հավուզի մոտ։ Էս տղեն իսկույն դուրս եկավ առաջը և ասեց. «Ինձ չե՞ս գալ»։ Այն ժամանակ աղջիկը ասեց. «Հենց ես քեզ նմաններին էի ման գալի, ինչի՞ չես շուտ եկել»։ Աղջիկը ասեց. «Գնա և սպասիր մինչև մյուս կիրակի։ Ես այն ժամանակ իմ ղարավաշներին հեռու կկանգնեցնեմ և ես ու դու կգնանք»։

Էս տղան էլ գնաց իր առաջվա տեղը և մինչև կիրակի օրը սպասեց։ Եվ կիրակի օրը էլի եկավ բաղը։ Աղջիկն էլ եկավ և յուր ղարավաշներին շատ հեռու կանգնացրեց և ինքը եկավ տղի մոտ. և հեծան ծին ու փախան։ Ղարավաշները շուտ գնացին հայտնեցին թագավորին, թե աղջիկը տարան։ Նա հավաքեց յուր զորքը, գնաց նորա հետևից, բոլոր զորքերին հրամայեց թափվեն ծովը և հասնեն հետևից։

Թագավորը ձայն տվեց և ասեց. «Աղջի՛կ, տե՛ս, ահա քեզ համար ինչքան զորք է կոտորվում»։ Բայց որտե՞ղ, նոքա գնացին։

Էս տղեն, երբ որ հասավ էն պառավ մարդի մոտ, էս պառավ մարդը երբ որ տեսավ աղջկանը՝ իսկույն մեռավ։ Նորան այնտեղ թաղեցին և իրանք գնացին։ Էս տղեն ծովի մեջ աղջկանը ասեց. որ «Ես քեզ այն վիշաբի համար եմ տանում»։ Էս աղջիկը ուզեց, թե ընկնի ծովը, ասում էր. «Ինձ ինչի՞ համար ես վիշաբի համար տանում»։ Էս տղեն ասեց. «Որ ես նորան կսպանեմ, և դու ինձ կգաս»։

Այս աղջիկը նոր որ տինջացավ։

Էս տղեն ասեց. «Երբ որ կգնանք վիշաբի մոտ, այն ժամանակ, դու ասա նորան, թե քո հոգին որտե՞ղ է, ասա՝ ինչի որ ես նորա հետ խոսեմ, ես մենակ չեմ կարող կենալ»։

Երբ որ սորանք հասան վիշաբի մոտ, վիշաբը ասեց էս տըղին. «Դու դնա ձեր տուն, մեկ էլ քեզ տեսել եմ այստեղ, իսկույն քեզ կուտեմ»։

Եվ ինքը՝ վիշաբը մյուս օրը գնացել է որս անելու։ Էս աղջիկը մեկ հոր է կտրել տան մեկ անկյունում և էս տղին դցել ա էն հորի մեջ և բերանը ծածկել ա։ Վիշաբը երեկոյան եկել ա տուն և ասել ա. «Տղեն դնա՞ց»։ Էս աղջիկը ասել ա. «Հա՛, դնացել ա»։ Էս աղջիկը ասել ա. «Ես մենակ չեմ կարողանում կենալ, ասա քո հոդու տեղը, որ ես նորա հետ խոսիմ»։ Վիշաբը ասել ա. «Իմ հոգին՝ կխտարի գլխումը կա իրեք լխպոր ճուտեր, նորանք են իմ հոգին»։

Առավոտը վիշաբը գնացել ա որս անելու, տղեն վեր ա կացել գնացել բադի մոտ կանգնել ա և տեսել ա, որ մեկ կխտար եկավ, որ ջուր խմի աղբրիցը։ Էս տղեն թվանքը կրակ ա տվել, իսկույն կխտարը վեր ա ընկել։ Նա գնացել ա գլուխը ջարդել և հանել ա այն իրեք լխպոր ճուտերին։ Վիշաբը իսկույն հիվանդացել ա և եկել ա դեպի տուն։

Էս տղեն ու էս աղջիկը էս լխպոր ճուտերին երկուսին սպանել են և մեկը իրանց ծեռին պահել են։ Վիշաբը խնդրել ա, ասել ա. «Թողե՛ք, դամ ձեզ ծառայություն անեմ»։ Բայց ականջ չեն դրել և սպանել են այն մեկին էլ. վիշաբը սատկել ա։

Էս տղեն մտել ա վիշաբի տուն և գտել ա բանալիք. և նա բոլոր տան գոները բաց է արել և տեսել ա, որ մեկ տանը կա ոսկի, մյուս տանը՝ շատ ջորի։ Նա վեր ա առել այս ոսկին և բեռնել ա այս ջորիներին և ինքը ու աղջիկը հեծել են ամեն մեկը մեկ ձի և ճանապարհ են ընկել դեպի իրանց տունը։

Էս տղեն եկել ա այնտեղ, որ իրա եղբայրները թողել են իրա կինը։ Նա վեր ա առել այն կինը և գնացել են։ Էս տղեն վերջապես հասել ա իրան տունը։ Նորա հայրը շատ ուրախացել ա և նամակ ա դարկել, որ բերեն այն մյուս որդոց էլ. նորանք էլ եկել են և սկսել են ուրախ ընակվել իրանց տանը։